

11791

338.1 (47)

9-68

1931


ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ

Յ Ե Վ

ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Խորհրդային Միության Ժողովախորհի լեվ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենսկամի վորոշումը՝ 1931 թվի գարնանացանի պայմանագրման մասին:
2. ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենսկամի վորոշումը՝ առաքականագիտացիոն աշխատանքի մասին՝ կապված գարնանացանի կամպանիայի նախապատրաստության հետ:
3. Խորհրդային Աղբեղանի Ժողովախորհի № 150, 1931 թ. հունվարի 27-ի վորոշումը—1931 թվի գարնանային գյուղատնտեսական կամպանիան նախապատրաստելու լեվ տանելու մասին:

Գինն է 10 կոպ.



20095
407

ОТ ПЕЧАТАНО
в типографии
„АЗЕРНЕШР“.
Баку, В.-Морск., № 16



4385-53

ԲՈՒՆՈՐ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ-ՏՆՏԵՍԱ-
ԿԱՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ-ԿՈՒՆՈՉԱՅԻՆ ՅԵՎ ԿՈՄՅԵ-
ՐԻՏՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻՆ

ՎԵԿԱՊԵ-ի (բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1931 թվի Գաղմանային ցանֆաերի պայմանա-
գրման մասին

Անցած 2 տարիներում 5-ամյա պլանի առա-
ջադրությունների գերակատարումը, մանավանդ,
ծանր արդյունաբերության ճյուղերում և դյու-
ղատնտեսական մեքենակառուցման արտադրու-
թյունում, — հնարավորություն է տալիս խորհրդ-
դային իշխանությունը 5-ամյակի 3-րդ տարում
եւ ավելի մեծացնելու՝ նախորդ տարիների հա-
մեմատությամբ՝ ներդրումները գյուղական տըն-
տեսություն մեջ և, այդպիսով, ուժեղացնելու
պետության ոգնությունը գյուղին՝ չքավորա-մի-
ջակային տնտեսությունների կուլեկտիվացման
և կուլակին — վորպես դասակարգ վերացնելու
առաջադրության իրականացման գործում:

Այդ առթիվ և զարմանացանի առաջիկա կամ-
պանիայի առթիվ խորհրդային Միության Ժողո-
վրդական Կոմիսսարների խորհուրդը և ՎԵԿԱՊԵ-ի
(բ) Կենտրոնական Կոմիտեն անհրաժեշտ են հա-
մարում հետևյալ հիմնական միջոցառումների կի-
րառումը:

Պետության ոգնության միջոցները — գյուղական
տնտեսությանը

1. 1931 թվի ընթացքում գյուղական տըն-
տեսությունն ուղարկել 120,000 տրակտոր (հաշ-

վելով տասն ուժանոց տրակտոր) 200 միլիոն ռուբլի ընդհանուր արժեքով:

2. Գյուղերում ունեցող 360 մեքենա-տրակտորային կայաններից բացի 1931 թվի ընթացքում կազմակերպել 1.040 նոր մեքենա-տրակտորային կայաններ, վորոնց տրակտորային պարկերն ընդհանուր առմամբ 980,000 քարշառժ են ունենալու. այնպես վոր 1931 թվի գարնանը պիտի գործի 1,105 մեքենա-տրակտորային կայան՝ 692,000 ուժանոց տրակտորային պարկով. դա պիտի ապահովի 1931 թվի գարնանը մեքենա-տրակտորային կայանների միջոցով 18 միլիոն հեկտար ցանելու՝ անցյալ տարվա 4 միլիոն հեկտարի փոխարեն: Մեքենա-տրակտորային կայանների հիմնական շինարարությունը 1931 թվին տրվելու է 540 միլիոն ռուբլի:

3. Գյուղական տնտեսությունը 1931 թվին գյուղատնտեսական մեքենաներ տալ յերկու անգամ ավելի՝ 1930 թվի համեմատությամբ (768 միլիոն ռուբլու՝ 400 միլիոն ռուբլու փոխարեն, այդ թվում 157 միլիոն ռուբլու բերքը հավաքելու մեքենաներ): Այդ մեքենաների հիմնական մասն ուղարկել կոլտոգները և մեքենա-տրակտորային կայանները՝ սահմանված պետական եժանգներով: Մինչև գարուն գյուղական տնտեսությունը տալ 370 միլիոն ռուբլու մեքենաներ:

4. Գյուղական տնտեսությունը տալ 7,000 բեռնակիր և թեթևակիր ավտոմոբիլ, վորոնցից 2000-ից վոչ պակաս — մեքենա-տրակտորային կայաններին:

5. Գյուղական տնտեսությունը տալ 1931 թվին 24 միլիոն ցենտներ (147 միլիոն փուլ) հանքային պարարտանյութեր, 105 միլիոն ռուբլու արժեքով, այդ թվում՝ մինչև գարուն 13 միլիոն ցենտներ (78 միլիոն փուլ):

6. Գյուղական տնտեսությունը տալ զնաատուների ղեմ կովելու միջոցներ՝ մինչև այդ կովի սեզոնն սկսվելը՝ 40 միլիոն ռուբլու, անցյալ տարվա 19 միլիոն ռուբլու փոխարեն:

7. Կոլտոգներում բերքի բարձրացումն ապահովելու համար բաց թողնել 21 միլիոն ցենտներ (126 միլիոն փուլ) ազնվատեսակ և լավացրած սերմեղեն, այդ թվում՝

հացահատիկային	11,500,000	ցենտներ.
յեզիպտացորենի	1,600,000	"
արևածաղկի	500,000	"
լոբեղենի	1,100,000	"
սոյայի	250,000	"
շաքարի ճակնդեղի	430,000	"
յերկարաթել կտավատի	760,000	"
խճուճաթել կտավատի	120,000	"
կանեփի	310,000	"
սերմային կարտոֆիլի	2,500,000	"
բամբակի	1,600,000	"
այլ սերմեղեն	430,000	"

Հացահատիկային ազնվացեղ սերմեղենի 4,1 միլիոն ցենտների Ֆոնդ կազմել պետազնվացեղ Ֆոնդից, ապրանքային — ազնվացեղ սերմեղենի 7,4 միլիոն ցենտների Ֆոնդ կազմել կենտրոնացված մթերումներից:

Հացահատիկային ազնվացեղ սերմեղենի ընդհանուր գումարից (11,500,000 ցենտներ) 10 միլիոն 900,000 ցենտները բաց թողնել սովորական հացահատիկների հետ փոխանակելու կարգով և առանց փոխանակելու 600—800,000 ցենտներ պետազնվացեղ Ֆոնդի սերմերից տալ՝ պայմանագրման կարգով, աշնանը վերադարձնելու պայմանով: Ցանոցներին սերմեղեն տալիս վերադիրը 15%-ից ավելի չպիտի լինի՝ ազնվացեղ լավացրած սերմեղենի մթերման գներին:

8. Ձերնոտրեստի սովխոզները պետք է կոլխոզներին ոգնուեցուն ցույց տան՝ կոլխոզներում գարնանային հերկ անելով 500,000 հեկտարից վոչ պակաս և ցանելով 500,000 հեկտարից վոչ պակաս: Ուժեղացնել սովխոզների կողմից կոլխոզներին ոգնելու մյուս բոլոր տեսակները (ազրոոգնություն, գյուղատնտեսական մեքենաների ոգտագործում, նորոգումներ, կաղեր պատրաստել և այլն):

9. Կոլխոզների և մեքենա-արակտորային կայանների համար բաց թողնել 1 միլիարդ 50 միլիոն ռուբլի՝ պետբյուջեյով և յերկարժամանակյա վարկով:

10. Բացի բոլոր վերև հիշված միջոցառումներից՝ պարտավորեցնել պետական բանկին, վոր բաց թողնի 355 միլիոն ռուբլի՝ իրենց ամբողջ դաշտագործության արտադրանքը պայմանագրող ցանողներին փողով ավանս տալով՝ բոլոր կուլտուրարների համար (թե ապրանքային և թե սերմային). այդ ավանսների հիմնական մասը պետք է բաց թողնվի մշակման ժամանակաշրջանում, նաև բերքը հավաքելուց առաջ:

Այդ բոլոր ներդրումները պետք է ապահովեն ծավալվող կոլխոզային շարժման տեխնիկական զինման և նյութական բազայի հսկայական աճումը, և հենց դրանով պիտի ավելացնեն յերկրի հումքի և պարենային ռեսուրսները:

Խնդիր դնելով՝ այդ հիման վրա արմատական կերպով լավացնելու արդյունաբերությունը — հումք, իսկ աշխատավորներին պարեն մատակարարելու գործը՝ պարտավորեցնել Խորհրդային Միության Մատակարարման և Հողային Ժողկոմատներին՝ գյուղատնտեսական կոոպերացիայի, Կոլխոզցենտրի, Տրակտորոցենտրի և Սեմենովոգ-կոլխոզցենտրի միջոցով կիրառելու 1931 թվի

գարնանային ցանքների պայմանագրությունը հետևյալ հիմունքներով. —

Հացահատիկային յեվ յուղատու կուլտուրաների վերաբերմամբ

1. Կոլխոզներում և չբաժնորա-միջակային անհատական տնտեսություններում հացահատիկային և յուղատու կուլտուրաների պայմանագրման պլան սահմանել 58 միլիոն հեկտարի համար, վորի մեջ՝

Խլբոցենտրի միջոցով	39,500	հազար հեկտար
Տրակտորոցենտրի	15,500	" "

Սեմենովոգ-կոլխոզցենտրի	3,000	" "
(ազնվացեղ ցանքներ ազնվացեղ սերմերենի համար):		

Ըստ կուլտուրաների պայմանագրել՝ հացահատիկային .	51,000	հազար հեկտար
արևածաղկի	4,430	" "
սոյա	400	" "
լոբիատեսակների	2,000	" "
բրնձի	170	" "

2. Բացի տրվող մեքենաներից և արտադրական վարկերից՝ լավահերկ կուլտուրաներն ավանսավորելու համար բաց թողնել 40 միլիոն ռուբլի, վորի մեջ՝

արևածաղկի համար	9	միլիոն ռուբլի,
յեգիպտացորենի	10	" "
սոյայի	6	" "
մյուս լոբիատեսակների	9	" "
բրնձի	6	" "

Ավանսները տալ բուկը լցնելուց և հերկը մշակելուց առաջ:

Արևածաղիկը և սոյան հանձնելիս կոլխոզներին տալ՝ նրանց անդամների համար՝ կանխիկ

վճարով ամեն մի ցենտներին 4 կիլոգրամ ձեթ
և 8 կիլոգրամ քուսպ. անհատական չքավորա-
միջակային տնտեսություններին տալ՝ արևա-
ծաղկի և սոյայի ամեն մի հանձնած ցենտների
համար 3 կիլոգրամ ձեթ և 6 կիլոգրամ քուսպ:

Բամբակի վերաբերմամբ

1. Պայմանագրեր բամբակի ամբողջ սպաս-
վող բերքը՝ կոլխոզներում և չքավորա-միջակա-
յին տնտեսություններում—1931 թվին 19 մի-
լիոն ցենտներ:

2. Կոլխոզային ռայոններում գոյություն ու-
նեցող 19 մեքենա-տրակտորային կայաններին
1931 թվին լրացուցիչ կերպով ավելացնել 130
մեքենա-տրակտորային կայաններ՝ 125 հազար
ձիու ուժ ունեցող տրակտորային պարկով. այդ
թվում մինչև գարունը կազմակերպել 118 մե-
քենա-տրակտորային կայաններ, վորոնք պիտի
ընդգրկեն 1,200 հազար հեկտար բամբակի
ցանքներ:

3. Մինչև դաշտային աշխատանքներն սկսելը
բամբակային ռայոններն ուղարկել 48 հազար
բամբակացան գործիքներ, վորից 11,000-ը չորս
և յերկու շաբանի ուղարկել 55,000 կուլտիվա-
տոր, վորից 2,000-ը տրակտորային. 23,000 բու-
կը լցնելու գործիքներ և 1,000 բամբակ հավա-
քող մեքենաներ:

4. 1931 թվին բամբակային կոլխոզներին և
չքավորա-միջակային անհատական բամբակա-
յին տնտեսություններին բաց թողնել պետական
եփան գներով 8,200 հազար ցենտներ (50 միլիոն
փութ) հաց և 1,640 հազար ցենտներ (10 մի-
լիոն փութ) հացահատիկային կեր. ամեն մի
տնտեսությանը տրվող հացի նորման խստորեն
պիտի կախված լինի այն բանից, թե վորքան

խնամքով են մշակվում բամբակի դաշտերը և
վորքան բամբակ է հանձնվում պետությունը:

5. Բամբակային ռայոններն ուղարկել 1931
թվին 250 միլիոն ռուբլուց վոչ պակաս արժեքի
արդյունաբերական ապրանքներ՝ բամբակաբույծ
տնտեսություններին վաճառելու համար. այն-
պես վոր այդ ապրանքները ծախվեն բամբակա-
բույծ տնտեսություններին նորմալ ապրանքա-
փոխության կարգով՝ սահմանված պետական
եփան գներով:

6. Բամբակ ցանողներին ավանսավորելու
համար բաց թողնել 100 միլիոն ռուբլի. այդ
գումարի 20 տոկոսը պիտի տալ ցանելուց առաջ,
30%-ը—առաջին անգամ բուկը լցնելուց առաջ
և 50%-ը—3-րդ անգամ բուկը լցնելուց առաջ.
պիտի իմանալ, վոր 3-րդ անգամ բուկը լցնե-
լուց առաջ ավանս տրվում է միայն այն դեպ-
քում, յեթե առաջին յերկու անգամն արդեն բու-
կը լցված է:

7. Բամբակ ցանողներին անտոկոս վարկ տալ
1,800 հազար ցենտներ հանքային պարարտա-
նյութեր, սահմանված ժամկետներին այդ պա-
րարտանյութերի արժեքը վճարելու պայմանով:

8. Ցանողներին սերմացու տալ այնքան, վոր-
քան հարկավոր է ամբողջ պահանջը ծածկելու
համար (1,600 հազար ցենտներ)—պայմանա-
գրման կարգով:

Շախի հակնդեղի վերաբերմամբ

1. Կոլխոզներում և չքավորա-միջակային ան-
հատական տնտեսություններում պայմանագրեր
շաքարի ձախդեղի ցանքսերի ամբողջ տարածու-
թյունը—1,200 հազար հեկտար:

2. Ձախդեղային ռայոններում կազմակեր-
պել 150 մեքենա-տրակտորային կայաններ, այդ

Թվում մինչև դարուն 120 մեքենա-տրակտորային կայաններ, վոր պիտի ընդգրկեն 375,000 հեկտար ճակնդեղի ցանքս:

3. Ճակնդեղային ուսյոններն ուղարկել՝ շաքարի ճակնդեղ ցանոդներին ծախելու համար 60 միլիոն ուլբուլ արդյունաբերական ապրանքներ. այդ ապրանքները պետք է վաճառվեն ճակնդեղ մշակող տնտեսություններին նորմալ ապրանքաշրջանառության կարգով՝ պետական սահմանված եժան գներով:

4. 1931 թվին պահել անցյալ տարվա համար սահմանված նորման, այսինքն ամեն մի հանձնվող ցենտներ ճակնդեղի համար ձրի տալ 58 կիլոգրամ քուսպ ու 1,05 կիլոգրամ շարապ (պատոկա) և ճակնդեղի արժեքի հաշվին — 60 գրամ շաքար:

5. Ճակնդեղ ցանոդներին ավանսավորվելու համար բաց թողնել 40 միլիոն ուլբուլ, այնպես վոր իբրև լրացում արդեն տրվող 25⁰/₀-ին՝ այդ գումարի 50 տոկոսը տրվի ակոսման ժամանակ և 25⁰/₀ ը — բերքը հավաքելու ժամանակ:

6. Ճակնդեղ ցանող կոլխոգներին և չքավորա-միջակային անհատական տնտեսություններին տալ հանքային պարարտանյութեր (սուպեր-ֆոսֆորատ) իբրև անտոկոս վարկ՝ ամեն մի հեկտարին 2 ցենտներ. այդ պարարտանյութերի արժեքը պիտի վճարել սահմանված ժամկետներին. պետք է ձրիաբար տրվի նաև ճակնդեղի սերմ՝ ամեն մի հեկտարին 32 կիլոգրամ:

Կսավաթի յեվ կանեփի վերաբերմամբ

1. Կոլխոգներում և չքավորա-միջակային անհատական տնտեսություններում կտավատի և կանեփի ցանքսերը պայմանագրել հետևյալ չափերով՝ յերկարաթել կտավատի թելի և սերմի

ցանքսեր—1,950 հազար հեկտար, խճուճաթել կտավատի սերմի ցանքսեր—400 հազար հեկտար, կանեփի և թե սերմի ցանքսերի—700000 հեկտար:

2. Կտավատ մշակող ուսյոններում 1931 թվին կազմակերպել 150 մեքենա-տրակտորային կայաններ՝ 75,000 ուժանոց տրակտորային պարկով, այնպես վոր մինչև դարուն կազմակերպված լինեն 77 մեքենա-տրակտորային կայաններ՝ 38,500 ուժանոց տրակտորային պարկով, վոր պիտի ընդգրկեն կտավատի 280 հազար հեկտար ցանքսեր:

3. Կտավատի և կանեփի առաջին մշակման գոյություն ունեցող գործարաններին 1931 թվին ավելացել 489 նոր գործարաններ, նրանցով ընդգրկելով բոլոր կտավատ կանեփ մշակող սովխոզները, մեքենա տրակտորային կայանները և այն կետերը, վորտեղ պետք է մեքենա-տրակտորային կայաններ կառուցվեն 1932 թվին:

Պարտավորացնել Սորհրդային Միության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Սորհրդին՝ 1931 թվին 600 կոմպլեկտ մեքենաներ պատրաստել այդ գործարանները սարքավորելու համար և 10,000 կտավատագլիչ, այդ թվից 4,500 ը մինչև սեպտեմբերի 1 ը:

4. Մինչև 1931 թվի դարունը կտավատա-կանեփային կոլխոգներին տալ 1,500 հազար ցենտներ հանքային պարարտանյութեր՝ արժեքը նշանակած ժամկետներին վճարելու պայմանով:

5. Ապահովել կտավատի և կանեփի ցանքսերը նոր ուսյոններում և լայնացնել ցանքսերը հին ուսյոններում. դրա համար պայմանագրման կարգով տալ 760 հազար ցենտներ յերկարաթել կտավատի սերմ, 120 հազար ցենտներ—խճուճաթել կտավատի սերմ և 300 հազար ցենտներ կանեփի սերմ:

6. Կտավատ և կանեփ ցանողներին ավան- սավորելու համար բաց թողնել 60 միլիոն ուղ- լի, վորի 40%-ը տրվում է ցանելուց առաջ և 60%-ը հավաքելուց առաջ:

7. Սպառող շրջանի կտավատ ու կանեփ ցանելու ռայոններում և արտադրող շրջանի վոչ հացահատիկային ռայոններում՝ կտավատ ու կանեփ ցանողներին տալ—1,25 ցենտներ հաց մեկ ցենտներ հանձնելիք թելի համար, աֆալես վոր մինչև գարնանային ցանքսն այդ նորմայի հաշվին տրված լինի ամեն մի հեկտարի համար կես ցենտներ (ընդամենը—5,3 միլիոն փութ հաց գարնանը):

8. 1931 թվին պահպանել կտավատի և կա- նեփի սերմերը հանձնողներին ձեթ և քուսպ մա- տակարարելու 1931 թվի նորման (7 կիլոգրամ ձեթ և 10 կիլոգրամ քուսպ՝ 1 ցենտներ կտա- վատի սերմի փոխարեն—կոլխոզները համար. 5,7 կիլոգրամ ձեթ և 8 կիլոգրամ քուսպ—ան- հատականների համար):

9. Սպառող շրջանի կտավատ-կանեփային ռայոնների և արտադրող շրջանի վոչ հացահա- տիկային ռայոնների կոլխոզներն ու անհատա- կան չքավորա-միջակային տնտեսություններն ազատվում են 1931 թվի հացի բերքի սովորա- կան նորմաները հանձնելուց, յեթե այդ տնտե- սություններն ընդհանուր ցանքսային տարածու- թյան 10-15%-ից վոչ պակաս կտավատ են ցա- նում կամ 5-7 տոկոսից վոչ պակաս կանեփ են ցանում, և յեթե նրանք կտավատն անպատճառ հանձնում են պայմանագրով յամբ:

10. Կտավատի-կանեփի ռայոններն ուղարկել՝ կտավատ և կանեփ ցանողներին 1931 թվին բա- ժանելու համար 100 միլիոն ուղբուց վոչ պա- կաս արժեքի արդյունաբերական ապրանքներ:

այդ ապրանքները ցանողներին պետք է ծախվեն նորմալ ապրանքափոխության կարգով՝ պետա- կան սահմանված եժան գներով:

Մյուս կուլտուրաների և սերմերի վերաբեր- մամբ պայմանագրման չափերը պետք է վորոշեն խորհրդային Միության Հողժողկոմատը և Մա- տակարարման ժողկոմատը՝ յերկու որվա ըն- թացքում:

Հանձնարարել խորհրդային Միության Մա- տակարարման ժողկոմատին և Հողժողկոմատին՝ սույն ցուցմունքների հիման վրա հաստատելու տիպային պայմանագրեր—պայմանագրմանմասին:

Խորհրդային Միության Ժողովրդական Կո- միսսարների խորհուրդը և ՎեկԱՊՆ-ի (բ) Կենտ- բոնական Կոմիտեն կոչ են անում բոլոր կուսակ- ցական, խորհրդային-տնտեսական, կոոպերատիվ- կոլխոզային և կոմյերիտական կազմակերպու- թյուններին՝ բոլշևիկներն ձեռք զարկել գարնա- նային ցանքսերի պայմանագրման գործին, գու- մարել իրենց բոլոր ուժերը և բացատրել բան- վորական ու գյուղացիական մասսաներին խոր- հրդային իշխանության ձեռք առած այն միջոց- ները, վոր ուղղված են գյուղատնտեսական տըն- տեսությունների կոլլեկտիվացման և տեխնիկա- կան վերազինման համար, նրանք պետք է գլուխ կանգնեն գյուղի միլիոնավոր մասսաների կոլ- խոզային շարժման նոր վերելքին և հենց դրա- նով ապահովեն վճռական նվաճումներ՝ կուլակու- թյան վերացման և գյուղի սոցիալիստական վե- րակառուցման գործում:

Խորհրդային Միության Ժողկոմխորհի
Նախագահ՝ Վ. Մոլոտով (Սկրյաբին)

ՎեկԱՊՆ-ի (բ) Կենտրոնական Կոմիտեի
Քարտուղար՝ Ի. Ասալին

1931 թ. հունվարի 21.

ՎԵԿՍՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

արտադրական ագիտացիոն-մասսայական աշխատանքի մասին, կապված գաղմաղակների կամայանիայի նախապատրաստման հետ

Գարնանացանի պլանի (100 միլիոն հեկտար գարնանացան, վորից վոչ պակաս քան 50 միլիոն հեկտար կոլխոզների ցանքսը պիտի կադմի և 7 միլիոն հեկտարից վոչ պակաս — սովխոզների ցանքսը) հաշոդ իրագործումը հնգամյակի յերրորդ տարվա պլանի կարևորագույն մասն է կազմում: Գարնանացանի հաշոդությունն վճարական պայմանն է կոլխոզային շարժման այս աշնանը սկսված նոր աճումը (վերջին 3 ամիսների ընթացքում մեկ միլիոնից ավելի գյուղացիական տնտեսություններ կոլխոզների մեջ են մտել) դարձնել մի իսկական հզոր հոսանք դեպի կոլխոզները: Այդ հոսանքը պետք է ապահովի կոլեկտիվացման կենտրոնական կոմիտեյի պլենումի վորոշած տեմպերի իրականացումը, համատարած կոլեկտիվացման հիման վրա նա պետք է ապահովի այն հետագա վճարական քայլերը, վորոնք արվելու են կուլակներին վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու գործում:

Ի նկատի ունենալով այդ, ՎԵԿՍՊԵ-ի (բ) կենտկոմը բոլոր յեռկրկոմներին, ազգային կոմկուսների կենտկոմներին և շրջկոմներին առաջարկում է. —

1. Բոլոր հացահատիկային և տեխնիկական մշակույթների ռայոններում ստեղծել արտելներ կազմակերպման նախաձեռնող խմբեր և հին

կոլխոզների 'ռոճի հիման վրա աշխատել այդ խմբերը կոլխոզներ դարձնել:

2. Ամեն տեղ գործադրել այն մի շարք ռայոնների պրակտիկան, վորոնք հին կոլխոզիկներից բրիգադաներ են կազմակերպել և այդ բրիգադաները ոգնում են նոր արտելներ կազմելու և ծանոթացնում են նոր արտելներին արտելային տնտեսություն կազմակերպման մեթոդների հետ:

3. Այնպես անել, վոր գարնանացանին վերաբերող բոլոր հիմնական և նախապատրաստական միջոցառումներն իրագործվեն այն ժամկետներում, վոր վորոշել է Խորհրդային Միության Հոդժողկոմատը և հաստատել է կուսակցության կենտկոմը: Դա, մանավանդ, վերաբերում է սերմացվի կոլխոզային ֆոնդ հավաքելուն, կոլխոզիկներին և անհատական տնտեսությունների ապահովագրական ֆոնդեր կազմելուն, սերմացվի ֆոնդերն ընտիր սերմերի փոխելուն, պլանը կոլխոզին, գյուղին և առանձին տնտեսությունը հասցնելուն, տրակտորների և գործիքների նորոգելուն՝ հարվածային աշխատանքի և սոցմրցություն ու հանդիպակաց պլանների ծավալման ճանապարհով, պարզեններ տալով առանձին սովխոզներին՝ մեքենատրակտորային կայաններին և կոլխոզներին ամբողջ տարվա արտադրական պլանն որինակելի կերպով կատարելու համար:

4. Կոլեկտիվացող գյուղին լայն ոգնություն հասցնել՝ ուղարկելով գործիքներ նորոգող բանվորական բրիգադաներ: Պրոֆմիություններն առանձին ուղարկություն պիտի դարձնեն, վոր գյուղատնտեսական մեքենաներ ու պահեստի մասեր պատրաստող ձեռնարկները կատարեն իրենց արդիինպլանը, տրակտորներն ու հանքային պարարտանյութերը ժամանակին բաց թողնվեն և տեղ հասցնվեն:

5. Կոլխոզները արտադրական պլանները քնն-
նուլթյունն և այդ պլանները հաստատումն ոգտա-
գործել կոլխոզնիկները մեջ կանոնավոր աշխա-
տանքի բաժանում կատարելու, բրիգադիւրներ
ընտրելու, բրիգադաներ կազմելու և նրանց պը-
լանային անելիքները վորոշելու համար: Աշխա-
տանքի կանոնավոր բաշխման խնդիրները, ավե-
րորդ շփոթուլթյունների և առանձին կոլխոզնիկ-
ներին անկանոն կերպով բեռնավորելու վերա-
ցումը, աշխատանքի դիւցիպլինայի և մեքենա-
ները կանոնավոր կերպով բեռնավորելու համար
պայքար մղելը, — այս ամենը կուսակցական, հո-
դային ու կոլխոզային կազմակերպուլթյունների
կարեւորագույն անելիքներից մեկն է հանդիսա-
նում մինչև գարնանացանի կամպանիան՝ մնա-
ցած ամիսների ընթացքում:

6. Բոլոր կոլխոզներում առանձնապես պետք
է ուսումնասիրվեն բերքի բաժանման կանոննե-
րը, վորպեսզի հետագայում վերանան բերքն ըստ
շնչերի բաժանելու բոլոր տարրերը: Այս տարվա
փորձը ցույց է տվել, վոր բերքի բաշխման նը-
ման սպառողական սկզբունքները խախտում են
աշխատանքի կանոնավոր կազմակերպումը կոլ-
խոզներում: Կոլխոզներում աշխատանքի ար-
դյունքներն ըստ աշխատանքի բաշխելուն դեմ
են կուլակները, դատարկապորտները և նրանք,
ովքեր սիրում են ոգտվել հասարակական աշխա-
տանքի արդյունքներից առանց այդ աշխատան-
քին մասնակցելու: Գարնանացանի իսկական
հաշուլթյան պայմանն այն է, վոր բոլոր կոլ-
խոզներն իսկապես իրականացնեն բերքը կոլ-
խոզնիկի ու նրա ընտանիքի թափած աշխատան-
քի քանակի ու վորակի համաձայն բաշխելու կա-
նոնները:

7. Գյուղական աւտովի մասսայական նա-
խապատրաստում կատարել՝ հատուկ կարճատե
կուրսեր, խորհրդակցուլթյուններ և կոնֆերեն-
ցիաներ կազմակերպելու ճանապարհով: Լայն
մասսայական աշխատանք ծավալել կոլխոզնիկ-
գեղջկուհիների մեջ, մասնակից անելով նրանց
այն միջոցառումներին, վոր կապված են գար-
նանացանի նախապատրաստման հետ:

8. Հաշվի առնելով շրջանները լիվիզացիան,
կադրեր պատրաստելու գործը հիմնականում
պետք է կենտրոնանա մեքենա-տրակտորային
կայաններում, սովխոզներում, խոշոր կոլխոզնե-
րում և ռայոնական կոլխոզմիուլթյուններում:
Այնպես պետք է անել, վոր համաձայն Խորհրդ-
դային Միուլթյան Հոդոդկոմատի ու Կոլխոզ-
ցենտրի վորոշման՝ մնացած 3 ամիսների ընթաց-
քում կադրերի պատրաստումն ընդգրկի վոշ մի-
այն արակտորիստների ու մեխանիկների, այլ և
կոլխոզների գյուղատնտեսական աշխատանքների
բոլոր ղեկավարների ու նոր մասնակցողների
հիմնական մասսային:

9. Վոշ միայն վարչական պերսոնալի, այլ և
յուրաքանչյուր յերկալթուղային աշխատողի պար-
տականուլթյունը պետք է լինի այնպես անել,
վոր գյուղատնտեսական բեռների տեղափոխու-
լթյան ուշացում չլինի, քանի վոր այդ ուշացու-
մը կարող է խանգարել ոգտագործելու արտա-
սահմանում գնած և Խորհրդային Միուլթյունում
արտադրած մեքենաներն ու պարարտանյուլթերը:

10. Գարնանացանն իրագործելու համար
փետրվարից սկսած մոքիլիզացիայի պետք է յեն-
թարկել քաղաքում աշխատող գյուղատնտեսների
վոշ պակաս քան 60 տոկոսը, բոլոր բարձր կուր-
սերի ուսանողներին, վորոնց արտադրական պրակ-

տիկան տեղի պետք է ունենա գարնանացանի սեզոնում ու այնուհետև բերքը հավաքելու կամ-պանիայի ժամանակ և բոլոր այն ուսանողներին, վորոնք այս ամառ ավարտում են գյուղատնտեսական բարձրագույն դպրոցներն ու տեխ-նիկումները. դրա համար նրանց պետք է ժա-մանակից առաջ արձակել՝ փետրվար ամսում:

11. Անհապաղ կազմակերպել ուսյոնների հո-դային ու կոլխոզային կազմակերպությունների ղեկավար կազմի ստուգում, այնպես վոր մինչև գարնանացանի նախապատրաստական աշխա-տանքների ծավալման սկիզբն այդ կազմակեր-պություններին ամրացված լինեն աշխատողների բավարար կադրերով:

12. Ռայգործկոմներն ու գյուղխորհուրդները պետք է ուժեղացեն այս կամպանիայի գործ-նական տնտեսական-արտադրական ղեկավարու-թյունը:

Կենտրոնական ու տեղական մամուլն անմի-ջապես պետք է ծավալի գարնանացանի նախա-պատրաստման հարցերի լուսաբանությունը, խրա-խուսելով առաջին շաբաթում գնացող ուսյոննե-րին և խարազանելով հետ մնացողներին: Մամու-լը հատուկ ուշադրություն պետք է դարձնի՝ հո-սանք կազմակերպելուն դեպի կոլխոզները և կրու-վելու թե իսկապես կոլխոզային հոսանք կազմա-կերպելուց հրաժարվելու աջ-ուսորտունիստական ձգտումների դեմ՝ կոլխոզային շարժման կամա-վոր լինելու պատրվակի տակ, և թե կովելու կոլխոզային շարժում կազմակերպելու իսկական աշխատանքը ադմինիստրատիվ ստիպմունքի մի-ջոցներով փոխարինելու փորձերի դեմ:

Մոսկվա, հունվարի 20.

ԱՆՐԲԵՋԱՆԻ ԺՈՂՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1931 թիվ հունվարի 27 № 150

1931 թվի գարնան գյուղատնտեսական կամպա-նիան նախապատրաստելու ու ցանելու մասին

1931 թվի առաջիկա գարնան գյուղատնտե-սական կամպանիան պետք է տարվի Ադրբեյջա-նի գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հետագա համառ աշխատանքի նշանի տակ:

Ընդարձակել տեխնիկական բույսերի ցանք-սային տարածությանը, բարձրացնել բերքատվու-թյունը, ավելի ամրապնդել գոյություն ունեցող և նոր կազմակերպվող սովխոզներն ու կոլխոզ-ները, մեքենա տրակտորային կայարաններ կա-ռուցել, այդ հիման վրա գյուղի չքավոր-միջա-կային խավերի մասսայական հոսանք կազմակեր-պել դեպի կոլխոզները, ցանքսային կամպանիան տանելու համար մոբիլիզացիայի յենթադիվ չքա-վորներին, միջակներին ու կոլխոզնիկներին, բոլ-շևիկյան հետագա հարձակում կուլակների դեմ, — սրանք են առաջիկա գարնան գյուղատնտեսա-կան կամպանիայի հիմնական խնդիրները:

Դրանից յենելով Ադրբեյջանի Ժողովրդական Կոմիսարների Սորհուրդը վորոշում է.

1. Ադրբեյջանում 31 թվի գարնան գյուղա-տնտեսական կամպանիայում գարնանացանի ընդ-հանուր տարածություն վորոշել 384,330 հեկ-տար, վորից —

1. Բամբակ	205,000	հեկտ. (Դրանից սով- խողները 14,500
2. Կենսափի և կա- նառնիկ	16,000	» հեկտար կոլխող- ները 94,000):
3. Քյանդիր	1,075	»
4. Ռամի	500	»
5. Արախիս	200	»
6. Սոյա	3,000	»
7. Ծխախոտ	1,360	»
8. Կաուչակաբեր	260	»
9. Ուրիշ տեխնիկա- կան բույսեր	5,000	»

Ընդամենը

տեխնիկ. բույսեր 232,395 հեկտ.

10. Բանջարանոց և բախչա	20,000	հեկտ.
11. Կարտոֆել	13,000	»
12. Յանած խոտ	32,000	»
13. Արմատապտուղ	4,000	»
14. Յանքս սիլոսի համար	4,200	»
15. Արևադարձային դա- նազան բույսեր	235	»
16. Հացահատիկներ	78,500	»

2. Առաջարկել Պետպլանին ու Հոդժողկոմա-
տին, վոր 10 որվա մեջ պլանները ճշտեն ըստ
ռայոնների ու ներկայացնեն Ժողկոմխորհին՝
հաստատելու:

3. Ի նկատի ունենալով, վոր տեխնիկական
բույսերի (բամբակ, կենսափի և այլն) պլանը մին-
չև սովխող, կոլխող ու անհատական տնտեսու-
թյան և հասցրված՝ առաջարկել դայրադործկոմ-
ներին, վոր մնացած բույսերի (հացահատիկային,
խոտեր և այլն) վերաբերմամբ՝ մինչև փետրվա-
րի 10-ը պլանը հասցնի կոլխողներին ու անհա-
տական տնտեսություններին:

4. Մինչև փետրվարի 1-ը կուլակային—ու-
նեւոր տնտեսություններին հասցնել այն հաստա-
տուն առաջադրությունները, վոր նրանք պետք
ե կատարեն:

5. Առաջարկել ռայգործկոմներին, վոր պլա-
նը մինչև ծուխերն ու կոլխողները հասցնելու
լայն կամպանիա ծավալեն՝ նրան հասարակական-
քաղաքական բնույթ տալով. այնպես վոր պլան-
ները քննության յենթարկվեն կոլխողիկներին
լայն ժողովներում, արտադրական խորհրդակցու-
թյուններում, չքավորական և բատրակային ժո-
ղովներում, գյուղական ընդհանուր ժողովներում,
գյուղխորհուրդների նիստերում:

6. Առաջարկել ռայգործկոմներին՝ խորհուրդ-
ների ռայոնական համագումարների որակար-
գում դնել առաջիկա զարնան կամպանիայի հար-
ցը, իսկ բամբակային ռայոններում՝ բամբակի
կամպանիայի պլանն՝ առանձին:

Տերիտորիայի կազմակերպումը

7. Առաջարկել Հոդժողկոմատին՝ մինչև մար-
տի 15-ը բոլոր կոլխողներում վերջացնել հողա-
ցուցմունքները:

Այդ ժամանակվանից վոչ ուշ՝ բամբակի դաշ-
տեր հատկացնել ամբողջ հողամասերով, ի նկա-
տի ունենալով կոլլեկտիվացման զարգացումը
բամբակային ռայոններում:

8. Առաջարկել Պետպլանին ու Հոդժողկոմա-
տին, վոր առան որում Ժողկոմխորհին ներկա-
յացնեն, թե ինչ միջոցներ են ձեռք առել Կու-
րի ափին գտնվող հողաբաժինները սահմանելու:

9. Առաջարկել Հոդժողկոմատին, վոր մինչև
զարնանպցանի սկիզբը վերջնականապես հող
հատկացնի նոր կազմվող սովխողներին:

10. 205,000 հեկտար բամբակ ցանելու պլանի հաշվող իրազործումն ապահովելու նպատակով ի լրացումն ժողկոմխորհի նոյեմբերի 14-ի № 796 և հունվարի 12-ի № 61 վորոշումներին՝

ա) կտրուկ կերպով արգելել բամբակային ռայոններում բամբակի հետ մրցող հացահատիկային և այլ բույսեր (չալթուկ, քունջուլթ, հացահատիկ, բախչա) ցանել ու ջրել:

բ) առաջարկել ռայզործկոմներին, վոր փետրվարի 15-ից վոչ ուշ ավարտեն բամբակի համար պետքական ու պատրաստված, բայց աշնանացանով բռնված հողերի կրկնավարը:

գ) հաստատել ժողկոմխորհի 1930 թվի նոյեմբերի 14-ի վորոշումը, այն ե՝ մինչև մայիսի 10-ն Ադրբեջանում ամենուրեք վերջացնել բամբակ ցանելը:

դ) առաջարկել Հոգժողկոմատին, վոր տասնորվա ընթացքում ժողկոմխորհին ներկայացնի ռայոններում բամբակ ցանելն սկսելու և վերջացնելու ժամկետները:

յե) պարտավորեցնել Փամբուղբիրլիգիին, վոր մարտի 10-ից վոչ ուշ՝ սկսի ցանողների հետ պայմանագիր կապել:

Պետպլանին ու Հոգժողկոմատին առաջարկել, տասնորում ժողկոմխորհին ներկայացնեն պայմանագրերը, նախատեսելով ժողկոմխորհի վորոշումից յեխող և ցանողներին արվող այն բոլոր պահանջները (ցանելու, արաթի, վերջացնելու ժամկետները և այլն), վոր մշակման նորմալ ընթացքն ու բարձր բերքատվությունն են ապահովում:

զ) առաջարկել ռայզործկոմներին, Փամբուղբիրլիգիին և մեքենա-տրակտորային կայան-

ներին, բամբակի համար հողերի հերկը վերջացնել մինչև ապրիլի 1-ը:

յե) բոլոր կոլխոզներն ու սովխոզները լիովին անցկացնել բամբակի շարքացանի, վոր 108-110 հազար հեկտար կկազմի: Բացի դրանից՝ անհատական սեկտորում բամբակի շարքացան անել 15 հազար հեկտարից վոչ պակաս:

Բամբակի դաշտերից պարարտացնել 17,900 հեկտար:

ը) առուները մաքրելու աշխատանքների դեկավարությունն ապահովելու համար՝ հանձնարարել Ազվողխոզին, վոր առանձին-առանձին ամեն մի ռայոնի առու մաքրելու գործի մշակած պլանը ներկայացնի ժողկոմխորհին, այնպես վոր փետրվարի 1-ից վոչ ուշ՝ աշխատանքն սկսված լինի:

Սովխոզային շինարարություն

11. Ադրբեջանի բոլոր սովխոզների հողերի ընդհանուր տարածությունը 31 թվին պետք ե 254 հազար հեկտարի հասցնվի, ըստ վորում բացի գոյություն ունեցող 25 սովխոզներից՝ 31 թվին պետք ե ելի նոր 23 սովխոզ կազմակերպվի՝ 83,285 հեկտար տարածությամբ:

Հանձնարարել Պետպլանին, վոր 10 որվա ընթացքում մշակի ու ժողկոմխորհ մտցնի նոր սովխոզների շինարարության ամբողջ հարցը:—

ա) Ադրբեջանի սովխոզներում դարնանացանի տարածությունը հասցնել 93,430 հեկտարի:

բ) նոր սովխոզները պետք ե կազմակերպվեն հետևյալ ռայոններում:

գ) բամբակի սովխոզների տարածություն սահմանել Որշոնիկիձեյի անվան սովխոզում 8,000 հեկտար, Կարա-Չալայում 5,500, Հաշտարխան-Բազարում—1000 հեկտար (անջրդի):

Ինչպիսի սովխող	Քիլո	Վերանայ ե գտնվելու	Հողի ընդհանուր տարածությունը
Բամբակի	4	Հաշտարխան-բաղար	1000 հեկտար
Կենտրոն, ուսմի և ու-		Սամուխ	8000 » Նովուբարեստ
րիշ թեկատու բույ-		Ղզըլ-Աղաջ	3195 » "
սեր		Անջի	2000 » "
		Ղալա-Դաղի	3800 » "
Սերմարուծական	1	Ղարաթաղի	2000 » Սեմենոտրեստ
և		Լենքորան	300 » Սեմենովոյ
բանջարանոց	1		
Բանջարանոցներ	3	Իլիչի նավահան-	633 » ԿՍՍՏՊ
		գիստ	
		Նուխի	200 » Նուխու բան-
			կոտայ.
		Ջանարաշ	250 » Դյանջայի բան-
			(կոտայ
Խառն (անասնապ-	3	Խաչմաղ	1800 » ԿՍՍՏՊ
բանջարանոց.)		Ղուբա	400 » ԱզԳեՊենի
Անասնապահական	3	Ղաղանբուլախ	11.780 » Սկոտովոյ
			Ակց. ընկ.
		Մարաղի	24.460 » "
		Գուրդիտան	6000 » "
Քուղ	1	Հովսանի	1000 » Լեկտեխերյո
	1	Քարթառ	1735 » "Կաուչկոնոս"
			Ակց. ընկ.
Խաղողի	2	Թուրքյան	122 » Աղվին
		Ղարաքենդ	50 » Կարվին
Ծխախոտի	1	Բելոխան	1500 » Սալուզտաբադ
	2	Նուխի	500 » Աղշուկ
		Ջափարբաբուղ	500 » "

դ) անասունների կերի բաղան ընդարձակե-
լու համար՝ ցանած խոտանարքերի տարածու-
թյուն սահմանել 6,400 հեկտար, վորից 5,236-ը
բազմամյա.

յե) բանջարանոցների տարածություն սահ-
մանել 2,650 հեկտար.

զ) սովխողներում կենտրոնի և կանառների տա-
րածություն սահմանել 2100 հեկտար, իսկ քյան-
դիրինը—1075:

ը) առաջարկել սովխողային շինարարությու-
նը ղեկավարող բոլոր կազմակերպություններին

ու հիմնարկություններին, անհապաղ ամեն մի
սովխողի համար արդիֆինալան կազմելուն անցնել.

թ) Հողփողկոմատը պետք է յերևան հանի և
ամեն մի ռայոնում սովխողների գարնանացանի
ցանքսային պլանը բաշխի՝ գարնան գյուղատըն-
տեսական կամպանիայի պլանի համաձայն:

Սնասնարություն

12. Առանձին կարևոր նշանակություն տա-
լով Աղբբեջանում անասնապահության զարգաց-
մանը՝ սահմանել, վոր անասունների թվի աճու-
մը 1930 թվի համեմատությամբ պետք է լինի
—խոշոր յեղջուրավոր անասուններինը—4,5
տոկոս և մանր անասուններինը ու վոչխարնե-
րինը—7,6 տոկոս:

13. Առաջարկել Հողփողկոմատին, վոր «Սկո-
տովոյ» ակցիոներական ընկերություն և Կենտրո-
նական Բանկոտայի հետ միասին՝ աճեցնի Բագ-
վում ու քաղաքամերձ ռայոններում ստացվող
խոշոր յեղջուրավոր անասունների բոլոր հոր-
թերը:

14. Հողփողկոմատը, Կոլխոզցենտրն ու Ագ-
մալբարիտտիֆակն անհապաղ պետք է ձեռնար-
կեն աղնվացեղ անասունների բուծարան կազ-
մակերպելով, այն է՝ խոշոր յեղջուրավոր անա-
սունների և գոմեշների—2, վոչխարբուծու-
թյան—3, ձիաբուծություն—6, խոզաբուծություն—14:

15. Հողփողկոմատը, Կոլխոզցենտրը և Ագ-
մալբարիթտիֆակը պետք է մինչև բեղմնավոր-
ման կամպանիան բեղմնավորողներ մտցնեն հե-
տևյալ քանակությամբ.—խոշոր յեղջուրավոր
անասուն—325. գոմեշ—78, վոչխար—400, վորձ
ձի—60, խոզ—65, աղնվացեղ թռչուն—1000,
դրանց ապահովելով համապատասխան ջինու-
թյուններով ու կերով:

16. Կոլխոզային հոտերը լրացնելու համար՝ Կոլխոզցիները պետք է ձեռք բերի—խոշոր յեղջյուրավոր անասուն—2600 գլուխ, գոմեշ—700, ձի—270, խոզ—1100 և վոչխար—13,000:

17. 1931 թվի դարունքից սկսած՝ ապահովել կոմպլեքսային մեթոդով զոտախնայական միջոցառումներ մտցնելու գործը, առանձին ուշադրություն դարձնելով կոլխոզային սեկտորին, վորի համար 12-ից վոչ պակաս կոմպլեքս մըտցնել կոլխոզ:

Պայմանագրում

18. Գյուղատնտեսական կուլտուրաների պայմանագրման հետեյալ պլանը մտցնել 1931 թվի դարնան համար.

ա) կոլխոզներում և չքավոր-միջակային տնտեսություններում պայմանագրել հնդավոր բամբակի և մյուս տեխնիկական թելատու բույսերի (կենափի, կանատնիկ, կտավատ և այլն) ամբողջ սպասվող բերքը.

1. Բամբակ	184.100	հեկտար.
2. Կենափի և կանատնիկ	13,000	»
3. Կտավատ	1,000	»
4. Չավթուկ	25,000	»
5. Վարսակ	3,000	»
6. Լոբեղեն	5,000	»
7. Յոնջա	2.300	»
8. Բանջարանոց	2,840	»
9. Կարտոֆել	4,000	»
10. Վուշ	800	»
11. Ծխախոտ	850	»
12. Արևածաղիկ	900	»
13. Արախիս	200	»
14. Քունջութ	125	»
15. Սոյա	3.000	»

Ընդամենը— 246,115 հեկտար

բ) կուլակային տնտեսությունների համար հաստատուն առաջադրություններ վորոշել՝ բամբակի վերաբերմամբ—6400 հեկտար և մյուս կուլտուրաների վերաբերմամբ—4000 հեկտարից վոչ պակաս.

գ) առաջարկել ռայգործկոմներին ու գյուղատնտեսական կոոպերացիային՝ կուլակային տնտեսությունների հետ պայմանագրություններ չկապել, այլ հաստատուն առաջադրություններ ներկայացնել նրանց և փոխարենը համապատասխան պարտավորագիր ստանալ ցանքսի համար.

դ) գյուղատնտեսական կուլտուրաների պայմանագրումը պետք է սերտ կապված լինի պայմանագրվող ցանքսերին ներկայացնվող ագրոկուլտուրային միջոցառումները կատարելու գործի հետ: Հանձնարարել հողփողկոմատին ու Մատակարարման փողկոմատին՝ պատշաճ հսկողություն հաստատելու այդ պահանջներն իրագործելու համար:

Մեքենա-սրակսորային կայանների կազմակերպումը յեվ գյուղացիներին արհադրական միջոցներ մատակարարելը

19. Մինչև դարնան գյուղատնտեսական կամպանիան 13 նոր մեքենա-տրակտորային կայան հիմնել հետեյալ ռայոններում.— Գյոքչայի ռայոն (Ուշառ), Աղդաշի, Քյուրգամիրի, Ղազարի (Ադստափա), Շամքորի (Դուլար), Սաբիր-Աբաթի, Սալյանի, Արի-Բայրամլուի, Աղջաբադու, Բելասվարի (Պուշկինո), Ղարադոնլուի, Ստալինի (Նորաշեն) և Թարթառի ռայոններում:

20. Մեքենա-տրակտորային կայանները պետք է տրակտորով հերկեն բամբակի արտերը 147 հազար հեկտարից վոչ պակաս (հաշված և ձմեռվա ցելը):

21. Առաջարկել Հողժողովոմատին, վոր 5 ուրում Տրակտորոցներին տրամադրության տակ ղնի բամբակաբուծական գծով աշխատող գյուղատնտեսներին 15 ավագ գյուղատնտես, հանձնի նույնպես և ամբողջ ագրո-հրահանգչական անձնակազմը, միմիայն մեկական գյուղատնտես թողնելով Ռայխլոպսայուզներում՝ բամբակ ցանոցներին սպասարկելու համար:

22. Հանձնարարել Զակտրակտոցներին, վոր մինչև փետրվարի 15-ը հինգ շաբաթական արհեստանոցներ կազմակերպի մեքենա-տրակտորային կայանների համար (Աղդամ, Գյոքչայ, Աղջաբազի, Սաբիր-Աբադ և Սալյան),

23. Զակսելխոզանաբը պետք է մինչև մարտի 15-ը գյուղատնտեսական գործիքներ մտցնի հետևյալ քանակությամբ.

Գուլթան	.	.	5,130	հատ,
Ցաքան	.	.	1,220	"
Կուլտիվատոր	.	.	4,200	"
Բամբակացանիչ	.	.	3,900	"
Հացահատիկ ցանող	.	.	400	"

Կոլխոզային շինարարություն

24. 1931 թվի ընթացքում ապահովել Աղբ-բեշանի չքավոր-միջակային բոլոր տնտեսությունների 20-25 տոկոսի կոլլեկտիվացումը, իսկ բամբակաբուծական տնտեսությունների 50 տոկոսը:

25. Առաջարկել Հողժողովոմատին, Կոլխոզ-ցներին ու ռայգործկոմներին, վոր փետրվարի 20-ից վոչ ուշ վերջացնեն արտադրական պլան-ներ կազմելու գործը:

Մինչև գարնան գյուղատնտեսական կամպա-նիան գոյություն ունեցող, ինչպես և նոր կազմակերպվող կոլխոզների կանոնադրական ձևա-

կերպումը կատարել, դրա համար Բագվից մոբի-լիզացիայի յենթարկելով համապատասխան քա-նակությամբ գյուղատնտեսներ, տեղերում այդ գործին քաշելով գյուղատնտեսական կոոպերա-ցիայի և հողբաժինների ամբողջ ագրոպեստնալը:

26. Պարտավորեցնել Կոլխոզցներին, վոր մինչև փետրվարի 10-ը վերջացնի տարեկան հա-շիվները կազմելու գործը, պարզի ֆինանսական դրությունն ու կարգի բերի կոլխոզների հաշվա-պահական հաշվետվությունը:

27. Պարտավորեցնել Կոլխոզցներին ու Հող-ժողովոմատին, վոր անհապաղ անցնեն կոլխոզնե-րում աշխատանքը կազմակերպելուն, այդ խնդ-րի շուրջը համախմբելով կոլխոզիկների հասա-րակական ուշադրությունը և դրա համար ոգտա-գործելով գյուղի ուղարկվող պատասխանատու-ամրացվածներին, գյուղատնտեսներին, հաշվա-պահական գործիչներին ու մյուսներին:

28. Առաջարկել Հողժողովոմատին, մինչև մար-տի 10-ը ավարտել հողացուցմունքները բոլոր գոյություն ունեցող և նոր կազմակերպող կոլ-խոզներում:

Շերամապահություն

29. Ագրբեշանում շերամապահության գար-գացման առանձին նշանակությունը նշելով բա-ժանելիք սերմի քանակությունը վորոշել 120 հազար տուփ, բաշխելով ըստ ռայոններին և դրա համապատասխան ել ցուցմունքներ տան պլանը մինչև գյուղ, մինչև ծուխ ու կոլխոզ հասցնելու: Պայմանագրումը վերջացնել մինչև փետրվարի 15-ը:

31. Շերամի բերքն ավերացնելու նպատակով Աղմեյվաշարաբբիլիգին պետք է հետևյալ մի-ջոցները իրականացնի՝

ա) ինկուբացիոն ձևով 50 հազար տուփ շերամի սերմից վորդ հանել:

բ) արտահանել 20 հազար վորդահան, այսինքն գոյություն ունեցող վորդահանների 30 տոկոսից վոչ պակաս, ժամանակին շերամապահներին մանր ինվենտար և ձրի գրականություն ու պլակատներ տալով:

գ) կոլխոզներում ու չքավոր-միջակային տընտեսություններում շերամի վորդի ցուցական կերակրումներ անել՝ 400 անգամից վոչ պակաս:

դ) Նուխու և Գյոքչայի ռայոններում 2 որինակելի կոլլեկտիվ վորդահաններ կազմակերպել, ամեն մեկը 133 տուփի:

յ) մինչև դարնան կամպանիայի սկիզբը 100 գյուղացիական որինակելի վորդահաններ սարքել այն ռայոններում, վորտեղ շերամապահությունն ավելի է զարգացած, այդ վորդահաններն առաջին տարին ոգտագործելով շերամի սերմը կոլլեկտիվ կերպով ինկուբացիոն համար:

զ) սահմանել, վոր ամեն մի տուփ շերամի սերմը պետք է 31,5 կիլոգրամ ապրանքային մետաքս տա:

32. Առաջարկել Հողօդկոմատին, վոր տան որում Պետպլանին ներկայացնի շերամապահության կերի բազան ավելի ընդարձակելու միջոցառումների մշակած պլանը:

Բանջարաբուծություն

33. Բանջարանոցների տարածությունն անցյալ տարվա 6430 հեկտարից հասցնել 12 հազարի, նույն թվում և սովխոզների 2,700 և կոլխոզների 2,460 հեկտարը:

Կարտոֆելի տարածությունը սահմանել 13 հազար հեկտար:

34. Առաջարկել Հողօդկոմատին, Մատակարարման Ժողկոմատին ու գյուղատնտեսական կոոպերացիային, վոր կարտոֆելի սերմով ապալվեն բոլոր գյուղացիական ցանքսերը, այդ սերմը մթերելով թե տեղում և թե ուրիշ տեղից բերելով:

Պարտավորեցնել Ազմեյվաշարաբերլիզին, վոր ցանքսերն ապահովի բանջարանոցային բույսերի սերմերով:

Կարբեր յեվ հասարակայնություն

35. Բոլոր ռայոններում կարճ ժամանակյա կուրսեր հիմնել ագրոլիագործների ու կոլխոզային ակտիվի համար, վոր ընդգրկեն ընդհանուր գումարով 20 հազար հոգու:

Կուրսերը վերջացնել մինչև փետրվարի 15-ը:

Հողօդկոմատը տեղերին անհրաժեշտ ցուցմունքները պետք է տա, իսկ Ֆինօդկոմատը՝ ռայոններին համապատասխան վարկ ապահովի տեղական բյուջեով:

Կուրսեր կազմակերպելու ամբողջ գործը դրվում է ռայոնական հողբաժինների վրա:

36. Հանձնարարել Փամբուղբերլիզին, վոր բոլոր ռայոններում, վոչ պակաս քան 10 հազար հոգու համար կուրսեր հիմնի ցանոցներ ու վորակյալ բանվորներ պատրաստելու:

Այդ կուրսերն ավարտել մինչև ապրիլի 1-ը:

37. Աղբպետհրատը պետք է դարնան ցանքսային կամպանիայի հիմնական հարցերին վերաբերող հանրամատչելի գրքույկներ հրատարակի՝ վոչ պակաս 20-ից:

Բոլոր հրատարակվող գրքույկները պետք է հավանություն գտած լինին:

Գրքույկների հրատարակությունը վերջացնել մինչև փետրվարի 15-ը:

38. Ամբողջ պարբերական մամուլը պետք է ամենամեծ ուշադրութիւնը դարձնի ընթացիկ ցանքսային կամպանիայի հարցերին:

39. Բոլոր ռալգործկոմները պետք է անհապաղ բերքատվութիւնը բարձրացնելու հարցերի շուրջը համախմբեն չքավոր-միջակային մասսաների ու կոլտոգային ակտիվի ինքնագործունե-յութիւնը՝ պարբերական հրատարակութիւններ, արտադրական խորհրդակցութիւններ կազմա-կերպելով բերքատվութիւնը բարձրացնելու հար-ցերի վերաբերմամբ:

40. Բերքատվութիւնը բարձրացնելուն վե-րաբերող պլանային առաջադրութիւնների շուր-ջը լայնորեն ոգտագործել սոցիալիստական մըր-ցութիւնն ու հարվածայնութիւնը՝ չքավոր-մի-ջակ անտեսութիւնների և կոլտոգնիկների շար-քերում:

41. Առաջարկել Հողօրդկոմատին, վոր փետըր-վարի 15-ից վոչ ուշ՝ հողբաժինների շտատներ կազմի՝ անհրաժեշտ մարդկանց մոբիլիզացիայի յենթարկելով:

42. Առաջարկել Հողօրդկոմատին և Բանվո-րա-Պյուղացիական Տեսչության Ժողկոմատին, վոր զարնան գյուղատնտեսական կամպանիայի կատարման պարբերական ստուգում կազմակեր-պեն՝ թե կենտրոնական ապարատն ստուգելու և թե տեղերը հատուկ բրիգադներ ուղարկելու միջոցով:

Խորհ. Աղբբեշանի Ժողկոմխորհի նախագահ՝
Բունյաթ-գադե

Խորհ. Աղբբեշանի Ժողկոմխորհի գործերի վա-րիչի տեղապահ՝ Ս. Ռգայեվ.



2013

«Ազգային գրադարան»



